ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/39

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2021 թ. N 39

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ /ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ/

Գործունեության հասցեն՝ Աճառյան 1, Երևան, 0040, ՀՀ

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում, 2 տարի ժամկետով՝ 20.10.2017թ.- 20.10.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հունվարի 15-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՃԿՊԱ կամ ակադեմիա) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՃԿՊԱ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի փորձագիտական գնահատման վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ակադեմիայի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 13 դեկտեմբերի 2018թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 28 հոկտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-12 դեկտեմբերի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 5 մարտի 2020թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 11 մայիսի 2020թ.

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբ: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Ակադեմիան պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական, հրատարակչական աշխատանքների և ուսումնառության իրականացումն է: Հաշվի է առնվել նաև, որ ՃԿՊԱ-ն ՀՀ ԱԻՆ համակարգի կառույց է և շատ հարցերում չունի որոշումների կայացման լիարժեք ազատություն:

Հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքում 2017 թ. կազմվել է ՃԿՊԱ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների պլան-ժամանակացույց, 2017-2019 թթ. ՃԿՊԱ-ն ունեցել է առաջընթաց իր գործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

1. Ներկայումս կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են հաստատության առաքելությանը, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և գիտելիքի, հմտությունների և կարողությունների բաղադրիչներով սահմանված չափելի վերջնարդյունքների: Ավելացել են հետազոտական ուղղվածության առարկաներ, մասնավորապես «գիտության մեթոդաբանություն», ավելացել է պրակտիկայի տևողությունը, արտակագ դրության ռեժիմում գործնական պարապմունքներն իրականացվել են լիարժեք: Ակադեմիան քայլեր է ձեռնարկել ապահովելու ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխան ընտրություն, գիտակցում է գիտելիքի գնահատման ճիշտ

քաղաքականության կարևորությունը, սակայն, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները գործնական հմտությունների զարգացման մասով բարելավման կարիք ունեն:

ՃԿՊԱ-ն ապահովում է ակադեմիական ազնվություն, կարևորում է ուսանողների ու դասախոսների շարժունությունն ու մի շարք միջոցառումներ ձեռնարկում այդ ուղղությամբ, ունի ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն, որը թույլ է տալիս հետագայում գործնականում ապահովել գործընթացների համակարգված իրականացումը, բացի այդ՝ նպաստում է ինչպես ուսանողների, այնպես էլ ՊԴԿ-ի և գործատուների ներգրավվածությանը այս գործընթացներում:

Կրթական ծրագրերի արյդունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայությունը, որը պարբերաբար բարելավվում է, մասնագիտական բարձր որակավորում ունեցող ՊԴ կազմը, ինչպես նաև դրա կայունությունը, ՄԿԾ-ները, շրջանավարտների զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակը թույլ են տալիս եզրակացնել, որ ***Ակադեմիան հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

2. Առաջին հավատարմագրումից հետո կառավարման ուղղությամբ բարեփոխումներ են իրականացվել և հստակեցվել են գնահատման առանցքային ցուցանիշները: Բացակայում են, սակայն, թիրախային ցուցիչները, ինչպես նաև ռազմավարական նշանակությամբ ԳԱՑ-երը, որոնք ակադեմիան պետք է պահի ուշադրության կենտրոնում:

Տվյալների հավաքագրման մեխանիզմներն առայժմ ձևավորման փուլում են. բովանդակության կառավարման որոշ էլեկտրոնային հարթակներ կիրառվում են (Moodle), որի միջոցով փորձ է արվել ավտոմատացնել գնահատման գործընթացը: Ավտոմատացված է նաև փաստաթղթաշրջանառության գործընթացը, սակայն կրթական ծառայությունների մատուցման և կառավարչական մնացյալ գործընթացներն առայժմ ավտոմատացված չեն, առկա է արդիականացման անհրաժեշտություն:

ՄՈՒՀ-ի ղեկավարներն առաջնորդվում են հստակ ռազմավարական ծրագրերով և ապահովվում է հաշվետվողականությունը:

Կառավարիչները կարևորում են որակի ապահովման համակարգը, սակայն ընթացակարգերը գործնականում դեռևս մասամբ են կիրառվում, վերլուծություններն իրականացվում են առավելապես առանց վիճակագրական վերլուծությունների: ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը 2014 թ.-ից չեն վերանայվել: Առկա է մարդկային ռեսուրսների և որակի ապահովման մշակույթի ձևավորման համար առաջնորդության պակաս:

Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

3. Ընդհանուր առմամբ գիտահետազոտական աշխատանքների համակարգման, հետազոտությունների միջազգայնացման, խրախուսման մեխանիզմների զարգացման և կիրարկման, ինչպես նաև համապատասխան ռեսուրսների տրամադրման խնդիր կա ռազմավարական մակարդակում: Այս ոլորտում 2017 թ. փորձագիտական խորհրդատվությունների կատարման հարցում բուհը թերացել է, սակայն վերջին մեկ տարվա ընթացքում որոշակի աշխատանքներ կատարվել են՝ ակտիվացվել են հետազոտական աշխատանքները, ձևավորվել է գիտական պրոռեկտորի ինստիտուտը, ստեղծվել է նոր

լաբորատորիա, կա փոփոխությունների դրական միտում (հատկապես հետպատերազմյան շրջանում, երկրի զարգացման գործում վերաարժևորվել է ակադեմիայի դերն ու նշանակությունը):

Միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման առումով առաջին հավատարմագրումից հետո աշխատանքներն առավել ուղղորդված են եղել: Խորհրդատվությունների հիման վրա ակադեմիայի կառուցվածքում ներդրվել է միջազգային կապերի և համագործակցության բաժինը: Միջազգային համագործակցության արդյունքում զարգացվել են նյութատեխնիկական ռեսուրսները: Թեև Ակադեմիայի համագործակցության շրջանակը չի ապահովել ներգնա և արտագնա շարժունություն ուսանողների և դասավանդողների շրջանում, այնուամենայնիվ միջազգային համագործակցությունը որոշ ազդեցություն ունեցել է կրթության բովանդակության միջազգայնացման, ինչպես նաև ռեսուրսներով համալրվածության առումով:

Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը

4. Առկա մասնակի թերացումներն առանցքային ազդեցություն չունեն որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի կողմից ներկայացված ծրագրով սահմանված ակնկալվող արդյունքների մեծ մասը համապատասխանում է փորձագիտական խմբի կողմից սպասվող բարելավումներին:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման, առաջընթացի քանակական ցուցիչներ և թիրախային նպատակներ ունենալու պահանջը,

   գ) ակնկալվող արդյունքի ձեռքբերմանն ուղղված միջանկյալ արդյունքների հստակեցման անհրաժեշտությունը,

   դ) ծրագրում ակնկալվող արդյունքի ձեռքբերմանն ուղղված միջանկյալ արդյունքների և դրանց գնահատման մեխանիզմների հստակեցման պահանջը,

   ե) բուհի կողմից իրականացվող գործընթացների համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,

զ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

   ա) Մասնագիտության կրթական ծրագրերի, իրականացվող գործընթացների մշտադիտարկման, արդյունավետության գնահատմանը ու բարելավմանը,

   բ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

   գ) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

   դ) որակի ներքին ապահովման կայուն համակարգի ստեղծմանն ու շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը:

4. Կազմակերպել ՃԿՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:

5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ., հունվարի 15
ք.Երևան